ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2022-2024թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-փետրվար)

Տնտեսական ակտիվության ցուցանիշ (ՏԱՑ)՝ %







Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2024թ. փետրվարի 29-ին 2023թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական) կազմել է՝ 113.6%, 2023թ. փետրվարին 2022թ.նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 111.2 %, իսկ 2022թ. փետրվարի 28-ին 2021թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 111.4%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2024թ.փետրվարին կազմել է 461 մլրդ 645.9 մլն դրամ, ինչը 2023 թ նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 99 մլրդ 4.2 մլն դրամով, իսկ 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 96 մլրդ 367.6 մլն դրամով:

Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով) 2024թ. փետրվարի 29-ին կազմել է 41 մլրդ 557.2 մլն դրամ, ինչը 2023 և 2022 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 3 մլրդ 932 մլն և 8 մլրդ 821.8 մլն դրամով:

Առևտրի շրջանառությունը (ընթացիկ գներով) 2024թ. փետրվարի 29-ին կազմել է 749 մլրդ 76.6 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 126 մլրդ 589.8 մլն և 259 մլրդ 577.7 մլն դրամով, իսկ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2024թ. փետրվարին կազմել է 473 մլրդ 111.1 մլն դրամ , ինչը 2023 և 2022թթ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 45 մլրդ 471.9 մլն և 156 մլրդ 813.4 մլն դրամով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի իրական աճը 2024թ. փետրվարի 29-ին 2023 թ. փետրվարի 28-ի նկատմամբ կազմել է 128.9%, 2023 և 2022 թվականների, ինչպես նաև 2022 և 2021 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 101 %-ի և 109.7 %-ի պարագայում:

Իրականացված շինարարության ծավալի իրական աճը 2024թ. փետրվարի 29-ին 2023թ. փետրվարի 28-ի նկատմամբ կազմել է 110.8 %, 2023 և 2022 թվականների, ինչպես նաև 2022 և 2021 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 113.2 %-ի և 104.9 %-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Առևտրի շրջանառության իրական աճը 2024թ փետրվարի 29-ին 2023թ. փետրվարի 28-ի նկատմամբ կազմել է 124.1% 2023-2022 թվականների, ինչպես նաև 2022 և 2021 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 118 %-ի և 108.2 %-ի պարագայում. իսկ այլ ծառայությունների ծավալի իրական աճը 2024 փետրվարի 29-ին 2023թ. փետրվարի 28-ի նկատմամբ կազմել է 105.2%, 2023 և 2022 թվականների ինչպես նաև 2022 և 2021 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 123.5 %-ի և 120.1 %-ի պարագայում:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2024թ. փետրվարի 29-ին կազմել է 70 մլրդ 50. 3 մլն դրամ, ինչը 2023թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 6 մլրդ 183.6 մլն դրամով, 2022 թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 30 մլրդ 305.8 մլն դրամով: Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2024 թ. փետրվարի 29-ին կազմել է 317 մլրդ 856.8 մլն դրամ, ինչը 2023 թ և 2022 թ նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է՝ համապատասխանաբար 103 մլրդ 29.2 մլն և 122 մլրդ 353.3 մլն դրամով: Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալը 2024թ. փետրվարին կազմել է 69 մլրդ 26.7 մլն դրամ, (ընթացիկ գներով), ինչը 2023թ. ցուցանիշից ավել է 1 մլրդ 822.5 մլն դրամով, իսկ 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 3 մլրդ 475.5 մլն դրամով:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2024թ. փետրվարի 29-ին կազմել է 4 մլրդ.712.1 մլն դրամ, ինչը 2023թ. և 2022թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 336.1 մլն և 844 .6 մլն դրամով:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2024թ. փետրվարի 29-ին, 2023 թ. փետրվարի 28-ի նկատմամբ կազմել է 96.9%, 2023 և 2022 թվականների, ինչպես նաև 2022 և 2021 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 90.4%-ի և 96.6 %-ի պարագայում:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2024թ. փետրվարի 29-ին 2023թ. փետրվարի 28-ի նկատմամբ կազմել է 147 %, 2023 և 2022 թվականների, ինչպես նաև 2022 և 2021 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 106.6%-ի և 116.7 %-ի պարագայում:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2024թ. փետրվարի 29-ին 2023թ. փետրվարի 28-ի նկատմաբ կազմել է 108.7 %, 2023 և 2022 թվականների, ինչպես նաև 2022 և 2021 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 100.1 %-ի և 108.8 %-ի պարագայում:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2024թ. փետրվարի 29-ին 2023թ. փետրվարի 28-ի նկատմամբ կազմել է 107 %, 2023 և 2022 թվականների, ինչպես նաև 2022 և 2021 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 108.6%-ի և 107.4 %-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ), ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մլն. դրամ





Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2024թ.փետրվարի 29-ին կազմել է 42մլրդ 510..2մլն դրամ, ինչը 2023 և 2022 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 1մլրդ 652.1. մլն և 1 մլրդ 122.3 մլն դրամով:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2024թ. փետրվարի 29 -ին կազմել է 90 մլրդ 762.9 մլն դրամ, ինչը 2023թ. փետրվարի 28-ի համեմատությամբ պակաս է՝ 229.3 մլն դրամով ,իսկ 2022 թ-ի փետրվարի 28-ի համեմատ՝ ավել է 29 մլրդ 758.1 մլն դրամով:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2024թ. փետրվարի 29-ին կազմել է 148 մլրդ, 802.8 մլն դրամ ինչը 2023 և 2022 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 29 մլրդ 888.7 մլն և 69 մլրդ 765.7 մլն դրամով:

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալի իրական աճը 2024թ. փետրվարի 29-ին 2023թ փետրվարի 28-ին նկատմամբ կազմել է 103,2%, 2023 և 2022 թվականների, ինչպես նաև 2022 և 2021 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 98.4 %-ի և 102.3 %-ի պարագայում:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալի իրական աճը 2024թ. փետրվարի 29-ին 2023թ. փետրվարի 28-ի նկատմամբ կազմել է 99,8%, 2023 և 2022 թվականների, ինչպես նաև 2022 և 2021 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 149 % և 126,5 %-ի պարագայում:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալի իրական աճը 2024թ. փետրվարի 29-ին 2023թ. փետրվարի 28-ի նկատմամբ կազմել է 116. 5%, 2023 և 2022 թվականների, ինչպես նաև 2022 և 2021 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 130.3 %-ի և 102.3 %-ի պարագայում:

ՍԳԻ-ն 2024թ. փետրվարին՝ 2023թ փետրվարի 28-ի նկատմամբ կազմել է 98.7 %, 2023թ փետրվարի 28-ին, 2022թ նույն ժամանակաշրջ. նկատմամբ՝ 108.1%, 2022թ. փետրվարին 2021 թ.նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 106.8%: ՍԳԻ-ն 2024թ. փետրվարին 2023թ. դեկտեմբերի նկատմամբ կազմել է 100.4%, 2023թ. փետրվարին՝ 2022թ.դեկտեմբերի նկատմամբ՝ 101.5 %, 2022թ. փետրվարին՝ 2021թ.դեկտեմբերի նկատմամբ՝ 101,7%:

Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) 2024թ. վերջի դրությամբ կազմել է 1 տրլն 30մլրդ 420 մլն դրամ, ինչը 20 մլրդ 804մլն դրամով կամ 2 %-ով պակաս է 2023թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից 52 մլրդ 98 մլն դրամով կամ 4,8%-ով 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Աշխատանք փնտրողների թիվը 2024թ. փետրվարի վերջի դրությամբ կազմել է 63365 մարդ, ինչը 4286 մարդով կամ 6.3 %-ով պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 20800 մարդով կամ 24.7%-ով պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից: Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը 2024 թ. փետրվարի վերջի դրությամբ կազմել է 45781 մարդ, ինչը 2318-ով կամ 4,8.%-ով պակաս է 2023թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 11831 մարդով կամ 20.5 %-ով պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

ԱԺԲԳ

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը և առևտրի հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար)



ՀՀ արտահանումը և ներմուծումը (մլն ԱՄՆ դոլար)



Արտաքին և փոխադարձ առևտրի առևտրաշրջանառության ծավալը 2024թ. փետրվարի 29-ին կազմել է 5 մլրդ 336.4 մլն. դոլար, ինչը 2 մլրդ 731.8 մլն դոլարով կամ 104.9 %-ով ավել է 2023թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 3 մլրդ 912.6 մլն. դոլարով 274.8%-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:
Արտաքին առևտրի բացաս. հաշվեկշիռը 2024թ հունվարին կազմել է է - 196.8 մլն դոլար, ինչը 393.3 մլն դոլարով կամ 66.6 %-ով պակաս է 2023թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 214,1 մլն դոլարով կամ 52.1%-ով պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:
Արտահանման ծավալը (ՖՕԲ գներով) 2024 թ. կազմել է 2569.8 մլն դոլար, ինչը 1562.6 մլն.դոլարով կամ 155.1 %-ով ավել է 2023թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 2063 4 մլն դոլարով կամ 407.5 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:
Ներմուծման ծավալը (ՍԻՖ գներով) 2024թ. փետրվարին կազմել է է 2 մլրդ 766.6 մլն դոլար, ինչը 1169.2 մլն. դոլարով կամ 73.2%-ով ավել է 2023թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 1849.3 մլն դոլարով կամ 201.6%-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Միջին ամսական անվանական աշխատավարձը (աճողական)



Միջին ամսական անվանական աշխատավարձը (աճողական) 2024թ. փետրվարին կազմել է 270722 դրամ, ինչը 21026 դրամով կամ 8.4%-ով ավել է 2023թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 65304 դրամով կամ 31.8 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Պետական բյուջեի պակասուրդը/հավելուրդը և դրա ֆինասավորման աղբյուրները, ընթացիք գներով, մլն դրամ



2024թ. փետրվարի 29-ին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 3մլրդ 778.6 մլն դրամ ընդ որում, ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ 20 մլրդ 642.6 մլն դրամ, արտաքին աղբ յուրների հաշվին ֆինանսավորումը՝ -24մլրդ 421.2 մլն դրամ: 2023թ. փետրվարի 28-ին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 54 մլրդ 544. 8 մլն դրամ: Ընդ որում ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -11 մլրդ 270.9 և -43,273,9 մլն դրամ: 2022թ. փետրվարի 28-ին պետական բյուջեի հավելուրդը կազմել է 40մլրդ 720.6մլն դրամ, ընդ որում ներքին և արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար 391,3 և -41,111.9 մլն դրամ:

Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի ինտերնետային կայքի հրապարակումները ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ